COVID-19.
փաստեր պատվաստանյութերի մասին

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ COVID-Ի ՎԱՏԱԳՈՒՅՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ

- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը նվազեցնում են COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու, հիվանդանոցում հայտնվելու կամ մահանալու վտանգը: Դրանք նաև նվազեցնում են ձեր՝ երկարատև COVID-ով վարակվելու վտանգը:
- COVID-19-ի դեմ Pfizer-ի, Moderna-ի և Novavax-ի պատվաստանյութերը **թարմացվել են**՝ պաշտպանելու վիրուսի ավելի նոր ենթատեսակներից:
- Թարմացված պատվաստանյութը կարող է ավելացնել եղած պաշտպանվածությունը (առաջացած նախորդ պատվաստումներից կամ վարակներից), որը ժամանակի ընթացքում կարող է թուլացած լինել:

6 ԱՄՍԱԿԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱ COVID-19-Ի ԴԵՄ ԹԱՐՄԱՑՎԱԾ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ

- **6 ամսականից 4 տարեկան երեխաների համար** պետք է խոսել նրանց բժշկական մատակարարների հետ այն մասին, թե պատվաստանյութի քանի դեղաչափ է նրանց անհրաժեշտ: Սա կախված է այն հանգամանքից, թե նախորդ տարիներին քանի դեղաչափ են նրանք ստացել:
- **5 տարեկան և ավելի բարձր տարիքի ցանկացած անձ** պետք է ստանա COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութի 1 դեղաչափ:
- **Իմունային անբավարարություն ունեցող մարդիկ** հնարավոր է, որ լրացուցիչ թարմացված դեղաչափի կարիք ունենան: Իոսեք ձեր բժշկի հետ այն մասին, թե որն է ձեզ համար ամենալավ ժամանակը:
- Հատկապես կարևոր է ստանալ ձեր COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութը, եթե դուք **65 տարեկան կամ բարձր տարիք եք**, եթե **ծանր հիվանդանալու վտանգը ձեզ համար մեծ է** կամ **երբեք չեք պատվաստվել COVID-19-ի դեմ**:
- Յուրաքանչյուր ոք պետք է պատվաստվի, նույնիսկ եթե նա **հղի է, կրծքով կերակրում է** կամ **ունեցել է COVID-19-ը**:
- Հավելյալ տեղեկությունների համար այցելեք cdc.gov/coronavirus/vaccine:

COVID-19. փաստեր պատվաստանյութերի մասին

ՈՐՏԵ՞Ղ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Եթե դուք ապահովագրություն ունեք, դիմեք ձեր բժշկական մատակարարին՝ պատվաստման համար հանդիպում նշանակելու համար: Սկսած 2024թ.-ի հոկտեմբերից՝ անվճար պատվաստանյութերը հասանելի կլինեն ապահովագրություն չունեցող անձանց համար որոշ վայրերում: Նշում. պատվաստվելու համար անչափահասներին անհրաժեշտ է ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը:

Ձեր թաղամասում պատվաստման վայր գտնելու համար այցելեք ph.lacounty.gov/vaccines կամ զանգահարեք **1-833-540-0473** կամ **2-1-1:**

Տանն արվող պատվաստում հասանելի է և կարելի է խնդրել՝ զանգահարելով **1-833-540-0473** կամ այցելելով VaccinateLACounty.com և սեղմելով In-Home Vaccines-ը:

ԼՈՒՐՋ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԶՎԱԴԵՊ ԵՆ

- Հայտնի կողմնակի ազդեցությունները ներառում են՝ ցավ, այտուց և կարմրություն պատվաստանյութի ներարկման հատվածում, մկանների կամ հոդերի ցավ, այտուցված ավշային հանգույցներ, ջերմություն, դող, գլխացավ և հոգնածության զգացողություն: Փոքրիկ երեխաների շրջանում կողմնակի ազդեցությունները ներառում են նաև լաց, անհանգստություն, քնկոտություն և ախորժակի կորուստ:
- Կողմնակի ազդեցությունները նշան են, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն:** Դրանք կարող են ազդել ձեր առօրյա գործողությունների վրա, սակայն պետք է անհետանան պատվաստումից հետո մեկ կամ երկու օրվա ընթացքում:
- Լուրջ կողմնակի ազդեցություններ հազվադեպ են լինում:

COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ

- Դուք չեք կարող պատվաստանյութից վարակվել COVID-19-ով: Պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19 հարուցող վիրուս:
- Պատվաստանյութերը փորձարկվել են տասնյակ հազարավոր մարդկանց վրա, ներառյալ՝ մաշկի տարբեր գույն ունեցող, տարեց և առողջական խնդիրներ ունեցող անձանց, և պարզվել է, որ դրանք **անվտանգ և արդյունավետ են:**
- Սկսած 2020 թվականի դեկտեմբերից՝ **հարյուր միլիոնավոր մարդիկ** ապահով կերպով պատվաստվել են COVID-19-ի դեմ:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շարունակում են ենթարկվել ԱՄՆ-ի պատմության մեջ **անվտանգության ամենաուժեղ հսկողությանը:**
- Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերն առաջացնում են վերարտադրողականության հետ կապված խնդիրներ: Պատվաստանյութերն անվտանգ են հղի անձանց համար և խորհուրդ են տրվում հղիության մասնագետների կողմից: